Ալեքսանդր Ծատուրյան

Խենթը և խելոքը

Քամբախտ մի երկրում մե՛ծ սով էր ընկել…
Երկրի խելոքներ ժողով գումարած՝
Միտք էին անում, թե ի՞նչպես փրրկել
Խեղճ ժողովրդին, սովից չո՛փ դառած…
Ու խոսում էին, խոսո՛ւմ, հա խոսո՛ւմ,
Ասես մարգարտի աղբյուր էր հոսում…
Մեկ էլ՝ որտեղից, այդ մեծ կաճառում
Ելավ խենթի մեկն, այսպես բան ասաց.
«Էհ, կո՛ւշտ խելոքներ, ի՞նչ եք շատ ճառում,
Շտապե՞ք, քաղցածին տվե՛ք կըտոր հաց…»:
Խելոք կաճառը, տեսավ, որ իրան
Խրրատ է կարդում մի խենթ, բաց–բերան.
Քիթը վեր քաշած՝ քա՛հ, քա՛հ ծիծաղով,
Խենթի խոսքերը նա արհամարհեց…
Ընտրեց բազմամարդ մի հանձնաժողով
Եվ սովի հարցը փակված համարեց…
Սա՛ղ տարի խորհեց հանձնաժողովը
Ու ա՛յնքան բազում նիստեր ունեցավ,
Մինչև որ մարդկանց կոտորեց սովը
Ու վերջն էլ՝ անցավ…
Ընթերցո՛ղ, հիմա դու ինքդ դատի՛ր,
Ու ի՛նքդ խենթին խելոքից զատիր…